

ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ
ՆԵՐՐՈՂԵԱՆ ԱՍԱՑԵԱԼ Ի ՀՐԱՇԱՓԱՌ
ԳԱԼՈՒՍՏ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ

(Հատված)

... Այսուհետև քեզ եհաս ժամանակ գործոյ, ո՛վ փառա-
կից իմ հոգի. պարտիս և վրոյդ մարդասիրութիւն ցուցա-
նել ի յերկրի. այսուհետև քեզ ապաստան առնեմ վանուն
աստուածութեանս մեր յարգել առ մարդիկ: Հայր իմ
ներեաց և եթող վպարտսն՝ որով դուն խափանեցար ի
հեղոյլ առ նոսա, մարմնոյ իմ պատարագաւն. սա առ
զիս առնաւառչեալ ի նոցանէ. և տայ նոցա զքեզ խա-
ղաղութիւն: Էջ այժմիկ սիրոյ աղբիւր՝ սիրով առ նոսա.
և մխթարեա՞լ որս ի պանդխտութեան վայրն՝ նժդեհ և
անցաւոր կենօք տառապիւն: Դարձո՞ւ վնոսա ի նանրու-
թեանցն. վոր ի վուր խռովեցուցանէ թշնամին, նայել յայն
բազմապատիկ օթեանս՝ վոր պատրաստեցաք նոցա: Բաշ-
խեա՞ նոցա իմաստութիւն առատ, զի մի՞ եղեռնագործն
մոլորեցուցէ վնոսա: Հաղորդեցայ կարեաց նոցա, և ծա-
նեայ փորձիւ, զի տկար և դիւրակործան բնութեան են
վիճակեալ. վասն այնորիկ աղաչեմ, անմեկնելի լե՛ր ի
նոցանէ. զօրացո՞ւ վնոսա ընդդէմ ամենայն փորձանաց:
Նահանջեա՞լ վկամս մարմնոցն, և զօրացո՞ւ վկամս մտացն:
Բեզ տամ վնոսա. քեզ մանձն առնեմ վնոսա. զքեզ խոս-
տացայ նոցա, և այժմ ի քեզ ամրափակեմ վնոսա զա-
մենեսեան. որպէս զի մի՞ լիցի ի նանիր հեղումն արեան
իմոյ, որ վասն նոցա: Առատացո՞ւ ի նոսա ո՛վ համագո-
յակից իմ հոգի՝ զշնորհս բժշկութեան, զմարգարէութիւն,
յխորհիւն զվերինս, զատելն զներքինս...:

(Ներսէս Լամբրոնացի, «Ատենաբանութիւն».
Վենետիկ, 1787, էջ 93—94):

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ
ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՀՐԱՇԱՓԱՌ ԳԱԼՍՏՅԱՆ
ՄԱՍԻՆ ԱՍԱԾ ՆԵՐՐՈՂԸ

(Հատված)

Այսուհետև հասալ քո գործելու ժամանակը, ո՛վ իմ
փառակից Հոգի. դու պետք է քո մարդասիրութիւնը
ցոյց տաս երկրի վրա: Այսուհետև քեզ եմ ապալինում
մեր աստվածութեան անունը մարդկանց մոտ հարգելու
համար: Իմ Հայրը ներեց և զիջեց պարտքերը, որով դու
արգելվեցիր նրանց վրա թափվելուց, իմ մարմնի պա-
տարագով. սա ինձ ստացալ նրանցից իբրև առնավատչաւ,
և քեզ կտա նրանց որպէս խաղաղութիւն: Այժմ, ո՛վ
դու սիրո աղբուր, իջի՛ր նրանց մոտ սիրով, և մխթա-
րի՛ր նրանց, որոնք պանդխտութեան վայրերում տառա-
պում են նժդեհ և անցավոր կյանքով: Հե՛տ դարձրու
նրանց այն ունայնութիւններից, որ թշնամին իվուր խռ-
վեցնում է, նայելու համար այն բազմապատիկ օթեանին,
որ պատրաստեցինք նրանց համար: Բաշխի՛ր նրանց
առատ իմաստութիւն, որպէսզի եղեռնագործը մոլորեցնի
նրանց: Ես հաղորդակից եղա նրանց կարիքներին և փոր-
ձով ճանաչեցի, որ վիճակվել են տկար և հեշտ կործա-
նելի բնութեան. ուստի աղաչում եմ, անբաժա՛ն եղիր
նրանցից, և զորացրո՛ւ նրանց բոլոր փորձանքների դեմ:
Հե՛տ մղիր մարմնական ցանկութիւնները, և զորացրո՛ւ
մտավոր ցանկութիւնները: Բեզ եմ տալիս նրանց, քեզ եմ
հանձնում նրանց, քեզ խոստացա նրանց. և այժմ քո մեջ
ամրափակում եմ նրանց բոլորին, որպէսզի իվուր չլինի
իմ արլան թափվելը նրանց համար: Առատացրո՛ւ նրանց
մեջ, ո՛վ իմ համագոյակից Հոգի, բժշկութեան շնորհները,
մարգարէութիւնը, երկնային բաների մասին խորհելը,
երկրային բաները ատելը...:

(Ներսէս Լամբրոնացի, «Ատենաբանութիւն»,
Վենետիկ, 1787, էջ 93—94, թարգմանաբար):

